

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կես տարվանը 6 րուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

(Խմբագրատանը գրվում են ուղղակի
Тифлис. Редакция „Мелк“)

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնները համար վճարում են
խմբագրատանը բաժին 2 կոպեկով:

ԲՈՎԱՆԻՍԱԿՈՒԹԻՒՆ

Դեռ պէտք է շարունակել:—Ներքին տե-
սութիւն: Մեր անցեալ և ներկայ հոգեորակա-
նութիւնը: Նամակ Ախալքալաքից: Նամակ Ախալ-
քալաքից: Նամակ Գերբէնից: Նամակ խմբագրին:
—Արտաքին տեսութիւն: Արեւմտեան
գրութիւնը: Բելլիկի կոմիտէի նշանակումը: Թուրք-աւստ-
րիական սահմանները: Նամակ Թուրքիայից: Արտաքին
լուրեր:—Յայտարարութիւններ:

ԴԵՌ ՊԵՏԷ Ե ԾԱՐՈՒՆԱԿԵԼ

Վանից գրված նամակներից
երեւում է, որ թէև արտերը մեծ
մասամբ ցանկած են Հայաստա-
նում, որ հունձքը այս տարի լա-
կը լինի, բայց այնու ամենայնիւ
սովոր չարունակվում է, ուրեմն
մենք էլ պէտք է շարունակենք
մեր նուիրատուութիւնները:

Մինչև որ հունձքը կը հասնի,
ժողովուրդը ինչով պէտք է ապ-
րի: Թէև ինչպէս գրում են, հաց
և կորեկ քիչ թէ շատ կայ, բայց
ժողովրդի ձեռքում դրամ չէ մը-
նացել: Եւ նուիրատուութիւնները
դժբաղդապէս սկսեցին քչանալ:
Կ. Պօլսի ու Վանի մասնաժո-
ղովների մօտ էլ շատ քիչ փող
մնաց:

Այժմ անցել է ժամանակ ցո-
րեն և կարտօֆիլ ցանելու, բայց
կորեկ ցանելու համար դեռ մի
քանի շաբաթ ժամանակ կայ:

Մասնաժողովների համար հար-
կաւոր են փողեր, ոչ թէ միայն
սերմացու առնելու համար, բայց
և եզներ առնելու համար թշուառ-
երկրագործ ժողովրդին տալու, որ
գրեթէ իր ամբողջ տաւարը կոր-
ցրել է: Բացի սորանից սովից
յետոյ միշտ տիրում է աղքատու-
թիւն և զանազան տարափոխիկ
հիւանդութիւններ: Պէտք է շա-
րունակել նուիրատուութիւններ այդ
չարիքների դէմ առնելու նպատա-
կով: Մինչև աշունը, այսինքն
մինչև միւս հունձքի հասնելը, թէ
Վանի և թէ Կ. Պօլսի մասնա-
ժողովները պէտք է դեռ իրանց
օժանդակութեամբ մի կերպ պահ-
պանեն Հայաստանի ողորմելի ժո-
ղովուրդը:

Եթէ մենք, ուսաստանցի հա-
յերս, յանձն ենք առել սարսա-
փելի սովի ժամանակ պահպանել

մեր օժանդակութեամբ Հայաս-
տանի թշուառ ազգաբնակիւթիւ-
նը, պէտք է մեր սկսած գործից
յետ չը կանգնենք, պէտք է մեր
գործը անկատար չը թողնենք,
և օգնենք Հայաստանին ամառվայ
երկու, երեք ամիսների ընթաց-
քում: Եւ եթէ սովի ժամանակ
օգնեցինք թիւրքաց հայերին, չը
պէտք է անօգնական թողնենք
նրանց, երբ նրանք մաքառում են
չքաւորութեան և հիւանդութիւն-
ների դէմ որոնք սովի հետեւանքն
են:

Եթէ սկսեցինք մեր բարեգոր-
ծական, ազգասիրական, եղբայրա-
սիրական և մարդասիրական գոր-
ծը,—պէտք է այդ մեր սկսած
գործը մինչև վերջը տանենք:

Յանկալի է որ նուիրատու-
թիւնները նոյնքան առատ լի-
նէին մինչև այս տարվայ աշուն-
քը:

Այն ժամանակ մասնաժողով-
ները կը կարողանան օգնել թը-
շուառ Հայաստանցիներին իրանց
չքաւորութեան մէջ կուել հայ
ժողովրդի մէջ տարածվող զանա-
զան ցաւերի դէմ, զեղեր առնել,
զուցէ և բժշկներ ուղարկել Հա-
յաստան, սերմացու առնել աշուն-
քի ցանքերի համար, տաւար առ-
նել երկրագործ ժողովրդի համար
և այլն:

Այդ պատճառով հրաւիրում
ենք մեր ամեն դաւանութիւննե-
րի ուսաստանցի հայ եղբայրնե-
րին, դարձեալ օգնել Հայաստանի
ժողովրդին իրանց առատ նուէր-
ներով, զոնէ ամառվայ այս երկու
երեք ամսվայ ընթացքում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԱՆՅԵԱԼ ԵՒ ՆԵՐԿԱՅ ՀՈԳԵՆՈՐԴԱԿԱՆՈՒ-
ԹԻՒՆԸ

Եթէ օրինակի համար վերցնենք մեր հայ
ազգը, և նրա անցեալը համեմատենք ներկայի
հետ, մենք կը տեսնենք շատ փոփոխութիւն-
ներ. վերցնենք հոգեորականութիւնը. վեր-
ցնենք մեր ազգային պատմութիւնը և
լաւ ու չաղութեամբ քննենք, և ի՞նչ կը
տեսնենք. մենք կը տեսնենք որ մեր ազգի
թէ կրօնական և թէ քաղաքական զործող-

ները եղել են ըստ մեծի մասին հոգեորական-
ներ:

Հոգեորականը նստած իր պաշտօնական
աթոռի վրա, ամենայն ջիւղեւանդութեամբ
կատարել է իր յանձն առած ծանր պաշտօն-
ները: Նա իր անձը նուիրել է իր սիրելի
ազգին. հարկ եղած ժամանակը իր վերջին
ըշտեր անգամ լարել է իր ազգի զոյւթեան
կուլի մէջ. նա ազգի հետ միացած անդադար
մաքառել է նրա փեսաների դէմ, և շատ ան-
գամ յաղթել է: Նա չէ բաւականացել մի-
այն եկեղեցու մէջ ժամերգութիւն կատարե-
լով, այլ իր դասից ուղարկել է ուսում
առնելու, ինչպէս Բիւզանդիոն, Աթէնք,
Նիդապոս և այլ տեղերում, շատ եպիսկոպոս-
ներին, վարդապետներին և հոգեորական միւս
պաշտօնականներին, որոնք վերադառնալով իրանց
հայրենիքը, ամենայն ջիւղեւանդութեամբ
տարածել են ուսումը իրանց հայրենակից-
ների և մինչև անգամ օտարների մէջ: Միով
բանիւ հոգեորականութիւնը զգացել է իր
պաշտօնի նշանակութիւնը. նա զգացել է
նոյնպէս, որ միայն հոգեոր արարողու-
թիւններ կատարելը բաւական չէ, և նորա-
նով իր պարտականութիւնը կատարած չի լի-
նի, և սկսել է դիտութեան վերաբերեալ
զանազան աշխատութիւններ մատուցանել ազ-
գին. նա եղել է մատենագիր, եղել է պատմա-
բան, եղել է աշխարհագիր, եղել է թարգ-
մանիչ, եղել է և ուսուցիչ և այլն: Եւ արդարեւ
կը տեսնենք, որ մեզ հասած մեր ազգային
զրկածները—մատենագրութիւնները, բոլորը
հոգեորական դասից են շարագրված: Իսկ
այժման հոգեորականութիւնը ի՞նչ է կա-
տարում...

Այժման հոգեորականութիւնը—Եջմիա-
ծինը կարող էր մեծ դեր խաղալ,—դեռ ևս
մասնաւոր ազգի ներկայ ճիւղաժամի մէջ, որ
սովից ոչնչանում են բազմաթիւ հայերը...
բայց ո՞ւմ են աւտում...

Եջմիածինը, յօգուտ հայ սովատանջների,
սկսեց նուիրատուութիւն հաւաքել միայն այն
ժամանակ, երբ Վշակը իր հրաբորբոց սրով
հրաւիրեց, շարժեց ամենքի զուլթը, երբ
հայ սովատանջներին օգնելին այլազգիքն
անգամ, և ո՞վ գիտէ, Եջմիածինը հատկապէս
նուէրները լիովին հասցրեց տեղ, թէ, դար-
ձեալ պէտք է ուղարկի տոկոսաբեր թղթեր
գնելու, ինչպէս վկայում է նրա օրդան Վրա-
րատը՝ աշակերտացիների 17000 րուբլու վի-
րաբերութեամբ (տես Վշակի 73-դ համարը,
կամ ապրիլի Վարդապետ ամսագիրը):

Եթէ Եջմիածինի մի որ և իցէ շինութեա-
նը վերանորոգութիւն է հարկաւորվում, կամ
մի չնչին կարօտութիւն է զգացվում, նա իս-
կոյն կոնդակներով նուիրակներ է ուղարկում
զանազան հայաբնակ քաղաքներ, խիստ
կերպով հեռագրում է վիճակաւոր ատեան-
ներին—կոնսիստօրիաներին, նուէրներ հաւա-
քելու:

Ի՞նչ կը լինէր, եթէ ոչ խոտութեամբ,
զոնէ սրտաշարժ և ազգու հրաւիրելով Եջ-
միածինը ժողովրդի ուշադրութիւնը դարձ-
նէր հայ սովատանջների վրա: Ի՞նչ կը լինէր,
որ Եջմիածինը իր կոնդակներից մի քանիսը
ուղարկէր նուիրատու ժողովրդին, աւելի սիրտ
տալու, այն կոնդակը, որ մեր նախնեաց
ժամանակ թաղաւորներին և երեւելի իշխան-
ներին իբրեւ ընծայ էր մատուցանվում, իսկ

այժմ ո՞վ 10—20 րուբլի նուէր է Եջմիածինին
կամ ձեռնարանին, նա կարող է կոնդակ ստա-
նալ: Միթէ մի քանի միլիօնաւոր հայ ժողո-
վուրդը, Եջմիածինի շինութեանց և ձեռնարա-
նի չափ էլ չէ, միթէ Եջմիածինը չէ ապ-
րում այն այժմեան նկղացած հայ ժողովրդի
արխանախոն քրտինքով...

Ահա այսպիսի հանգամանքներից ստիպ-
ված, եթէ մի որ և իցէ անձ գրում է Եջ-
միածինի դէմ, նա նեղանում է և պատասխա-
նում է, կամեալով իրան արդար չոյց տալ.
բայց ի՞նչու է աշխատում:

Մենք, առ այժմ, բաւականացանք միայն
այսքանով, իսկ եթէ Եջմիածինը իրան ար-
դար կը համարի և կը պատասխանէ մեզ,
մենք այն ժամանակ մի քանի օրինակներ կը
բերենք այն ցաւալի դէպքերի, որոնք նորեւ-
րում տեղի են ունեցած նոյն իսկ Թիֆլի-
սում, և որոնք վերաբերվում են Եջմիածինի
անտարբերութեանը:

Կ.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԿԱԼԻՑ

16 մայիս

Ինչպէս յայտնի է, Ախալքալաքի բնակիչները բոլ-
րեքսան հայեր են, բայց մի քանի տուն հրէաներից:
Ախալքալաքը ունի տեղութեան մի ուսումնական
երկու դասատուներով և երկու հայոց հոգեւոր
դպրոցներ՝ միւր տղայոց, միւսը օրիորդաց: Այս երեք
իսկ ուսումնարանների մէջ կրթվում են մօտ 300
երեխայ: Բոլոր խոտովանիկները Եջմիածինը
քաղաքները, կարող են նոյն ապ 300 ուսանող ե-
րեխաների միջից ընտրել զոնէ 10 առողջ, ժիւ և
զուարթ երեխաներ: Կարող են նոյն ցոյց տալ
ինձ դոնէ մի երեխայ, որ մօտ լինի այս երեք
ուսումնարաններից մինի մէջ առողջ և նոյնպէս
առողջ դուրս եկած լինի այնտեղից—չեմ աւտում
մի քանի տարիներից յետոյ, զոնէ մի քանի ամիս-
ներից յետոյ,—Քանի, քանի հայեր կարող են
վկայել, որ մեր ուսումնարաններ մտնող առողջ
ժիւ և զուարթ երեխաներ կարմիր թշերը մի
քանի ամսվայ միջոցում բոլորովին գունաւորված են
եղել, նոյն զուարթ, վարվառն աչքերը ծածկվել
են մի սև ամպով, նոյն ժանկական ճիւղայ ծպտող
կորել է, անհասանցելի է նրանց շրթունքներից, նոյն
ֆիզիքային զարգանալու տեղ, նիհարացել են, կար-
ծես ծերացել... Այս բոլորը մի անուրանալի ճշ-
մարտութիւն է, որ կը վկայեն թէ մեր աշակեր-
տելոց ծնողները և թէ մեր ուսումնարանական
վարչութիւնը: Այս երեւոյթը մի նոր բան չէ մեզ
համար. սա մի քանի տարիներէ ի վեր գուռը
կանգնած է մեր առաջ և սպառնում է կորցնել,
չնչել բոլորովին մեր զուարթութիւնն ու առող-
ջութիւնը, որ բնութիւնը մեզ առաջ պարգեւ է
ժամանակ է արդէն մտածել, ժամանակ է արդէն
խմանալ սորա պատճառը և, եթէ կարելի է, եթէ
դեռ ուշ չէ, դարման դնել այս ցաւին...

Որքան մենք հետաքրքրվել ենք այս հարցով և
համոզվել, այս բոլոր դժբաղդութեանց պատճառը
մեր ուսումնարանների անդամորութիւններն են.
մի տեսակ, ոչ աւելի քան 3 արշին բարձրու-
թեամբ, երկու փղերիկ պատուհաններով, առանց
հողմարարների (վենտիլատոր), առանց կլի-
նապատուհանների (մանաւանդ Ախալքալաքում,
որտեղ լինում է տարափոխի ձմեռ, որ շարու-
նակվում է մօտ 7 ամիս), ասում ենք, մի այսպի-
սի փղերիկ սենեակ բոլորովին մուլ, թանձր օդով
կարող է արդեք դասատուն համարվել 15—20
աշակերտի համար: Մեր Ախալքալաքի ուսում-
նարանների մէջ բոլոր դասատուները այսպիսի
սենեակների մէջ են գտնուված: Դասախօսու-
թեան ժամանակ դրսից մտնող մարդը մի քանի
վայրկեան դեռ իր աչքերը պիտի ձգէ, որ կար-
ողանայ բան տեսնել, այնքան մութ է դասատու
մէջ: Բացի սորանից մարդուն պատում է դասա-

տան մէջ մի գարշելի, ապականած օդ: Բաւական չէ այս, մեր տղայացի ուսումնարանի մի մասը այն- քան հնացել է և այն աստիճան խախտու էր որով- թեանք է հասել, որ մի օր կարող է բլրել և թա- ղել իր աւերակները տակ թէ աշակերտներին և թէ ուսուցիչներին...

Չարմանալի բան. Ախալքալաքի հասարակու- թիւնը բաւականին զգացել է ուսման ճաշակը. ծախսում է բաւականին մեծ գումար. Թիֆլիսից տեսուչ և ուսուցիչներ է հրաւիրում. սոցա ու- ճիկները մինչև հազարներ բարձրացնում, բայց այն հասարակ բանը չէ մտածում, որ, մի և նոյն ժամանակ, հարկաւոր է և ուսումնարանին յար- մարաւոր շինութիւն ունենալ, որպէս զի ծախսած փողը զօր տեղ չը կորչի և խեղճ, անմեղ մա- նուկները յաւիտենական հիւանդութեան չը դա- տապարտվեն...

Նոյնը կարող ենք ասել և միւս գաւառների մասին: Յիշատի դարմանալի երեւոյթ. մեր գաւառ- ների հայ ժողովուրդը բաւական աշխատում է ու- սումնարաններ բարձրացնել համար, ծախսում է ա- հազնի գումարներ, բայց դեռ չէ հասկացել, որ բաւական չէ ուշադրութիւն դարձնել միմայն ե- րեխայացի մտաւոր զարգացման վրա, որ հարկա-ւոր է և ուսումնարանի առողջապահական կանոն- ները խստիւ պահպանել...

Չը գիտեմ ինչպէս է վերաբերում այս հարցին մեր ուսումնարանական վարչութիւնը, բայց հաս- տատ աղբիւրներից լսում եմ, որ տեղիւ ռուսում- նարանների տեսուչը, հողաբարձուների միջնոր- դութեամբ, կամենում է խնդրել հասարակութիւ- նից, որ այս վերջինը քաղաքային գումարից մի քանի հարիւր ռուբլ յատկացնէ տղայացի ուսում- նարանի շինութիւնը նորոգելու համար: Ուզում են զիմեղ հասարակութեան, որովհետև ուսումնարանը չունի բոլորովին ինքնակաւ միջոց:

Եւ յիշատի եթէ մեր հասարակութիւնը քաղա- քային փող կը ծախսի զանազան պարտէզներ և բո- տանիքներ և զանազան շինութիւններ, ինչպէս չէ կարող ծախսել ուսումնարաններ բարձրացնելու հա- մար—ուսումնարաններ, որտեղ նա ամբողջ ապա- զայի հիմքն է ստանում:

Երդուովից գաղթած մեր չքաւոր ժողովուրդը կարող է մնալ առանց պարտէզների և բո- տանիքների, բայց չէ կարող մնալ առանց ուսումնարանի... Մի և նոյն ժամանակ թող մեր հասարակութիւնը լաւ գիտենայ, որ բարձր իշխա- նութիւնը, որից կախված է քաղաքային փող ծախ- սելու թոյլատուութիւնը, անկի մեծ ուրախու- թեամբ թոյլ կը տա, որ քաղաքային փողը ու- սումնարանների համար ծախսվի, քան թէ զանա- զան պարտէզների և բոտանիքների: Մեր այս խօսքերի հաստատութիւնը թող լինի պետական ուսումնարանների զրկելու օրէնք. պ. Ստրելց- կու գործունէութիւնը: Այս պարտը, տեսնելով, որ Ախալքալաքը բոլորովին զուրկ է ուսումնա- րանայարմար շինութիւնից, աշխատեց, որ այս- տեղ ուսումնարանին յարմարաւոր մի տուն շին- վի և տեղիս հասարակութիւնը յանձն առաւ ծախսել այս շինութեան համար 12000 ռուբլ քա- ղաքային գումարից: Բարձր իշխանութիւնն էլ մեծ ուրախութեամբ հաստատեց հասարակու- թեան այս վճիռը: Յուսանք որ Ախալքա- լաքի հասարակութիւնը նոյն միջոցը գործ կը զնէ տեղիս հայոց հողերը զարդանքի շինութիւ- ները նորոգելու համար: Կրկնում ենք. Ախալքա- լաքի բնակիչները բոլորն էլ հայեր են, ուրեմն ի՞նչ ընդհանուր գումարից իրանց ուսումնարան- ների համար փող ծախսեն, ոչոքին զրկողութիւն չի լինի: Թող փորձի մեր հասարակութիւնը: Թող հասարակական վճռով մի գումար յատկացնի քա- ղաքային փողից հողերը զարդանքի, գուցէ իշ- խանութիւնը չը մերժէ այս վճիռը և հաստա- տէ...

ՆԱՍՏԱԿ ԱՍՈՒԿԱԿԻՅ

18 մայիսի

Չեր լրագրի 77 համարի մէջ մի անյայտ պա- րոն Ախալքալաքի լուր տալով իր համաքաղաքացի տիրացու վաստի Յարոյեանի մասին, բարեհաճել է մի քանի անխիղճ զրգարութիւններ ևս արձա- կել իմ անձի դէմ: Ես մի խօսք անգամ արժան չէի համարի պատասխանելու այդ անյայտ լրա- տուին, բայց տպագրական խօսքի և լրագրութեան յարգը պարտաւորեցնում է ինձ սոյն երկուողը ուղարկել ձեզ, յուսալով ձեր անկողնապահու- թեան վրա, որ անուշտ կը հրատարակէ ձեր ար- տութիւնը վերականգնելու համար:

Նախ, որ ոչ թէ էջմիածնական Սինոդը, ինչ-

պէս հաղորդում է պ. լրատուն, այլ Ախալքալա- քի հող. կառավարութիւնն էր յանձնել ինձ այդ քննու- թիւնը: Երկրորդ, ես ոչ միայն մօտաւոր ազգակա- նութիւն, ինչպէս գրում է պ. լրատուն, այլ և որ և է բարեկամական յարաբերութիւն անգամ չեմ ունեցել և չունեմ Յարոյեանց տիրացուի հետ: Եր- րորդ, ես կատարեցի ինձ յանձնված քննութիւնը ստանալով հարկաւորված ցուցումները այնպէս, ինչպէս որ իմ պարտաւորութիւնն էր, իբրև քննիչ և ոչ թէ ոչոքի չը հարցրած, ոչինչով վերադար- ձայ. գուցէ լրատու պարտը անուշտ տեսած կամ լսած կը լինէր, որ բազմաթիւ մարդիկ, մի քանի օր շարունակ գալիս էին հողերը կառավա- րութեան ատենը ցուցումներ տալու: Մենք եր- բէք ցանկութիւն չունենք խոյ տալու լրացի, ինչ- պէս լրատու պարտը: Բայց թէ ինչ հետեանք կունենայ քննութեան գործը, այդ ինձ յայտնի չէ, միայն ես վստահ եմ չը կարմրել խղճիս առաջ այն- պէս, ինչպէս այն տողերը կարդալու ժամանակ կարմրելու է անյայտ լրատուն: Գործի մասին այսպիսի տակուց յետոյ, կարծում ենք բաւակա- նաչափ պարզվում է իրողութիւնը:

Խ. Ա. Ք. Բարսեղեանց

ՆԱՍՏԱԿ ԳԵՐԲԵՆԴԻՅ

6 մայիսի

Լսելով Տաճկաստանի մեր եղբայրների և քոյրե- ռի խղճալի դրութիւնը և գիտնալով որ բարեգոր- ծութիւնը չէ նայում ոչ սեռին և ոչ հասակին, մեր մէջ հաւաքեցինք մի աննշան գումար և ահա ուղարկում ենք ձեզ, խնդրելով որ հասցնէք ուր որ հարկն է. մենք մեզ բաղդաւոր կը համարենք, եթէ քաղցածների թիւը մէկով պակասի:

Սորա հետ ուղարկեցինք և նուիրաբանաց ա- նունները:

Մարիամ Օհանեանց 10 Կ., Սոնայ Օհանեանց 10 Կ., Հեղինէ Օհանեանց 5 Կ., Մինայ Միսկա- րեանց 5 Կ., Եղիաբէթ Եղուբեանց 1 Կ., Ոմն 50 Կ., Մարիամ Ղորգանեանց 50 Կ., Մարիամ Աւագեանց 50 Կ., Անուշ Տէր-Ղազարեանց 20 Կ., Մարիամ Վասիլեանց 10 Կ., Աննա Վասիլեանց 10 Կ., Եղիաբէթ Իւանովեանց 30 Կ., Սոնայ Ն- ղիազարեանց 20 Կ., Նորիկ Զաքարեանց 10 Կ., Եղիաբէթ Զուարեանց 80 Կ., Եղիաբէթ Ներս- տալիսի 20 Կ., Եղիաբէթ Մելքոնեանց 15 Կ., Գէորգ Եղարեանց 40 Կ., Ալեքսանդր Եղարեանց 20 Կ., Վարդանուշ Իւզաչեանց 5 Կ., Նուշէ Ա-ւանեանց 60 Կ., Սոնայ Աւանեանց 15 Կ., Ոմն 25 Կ., Եղիաբէթ Զախարեանց 10 Կ., Նունէ Գողա- լեանց 30 Կ., Ընդամենը 7 Կ.:

Աշակերտուհիներ Մարիամեան օրիորդական զպրօքի:

ՆԱՍՏԱԿ ԽՍԵԱԳՐԻՆ

Թիֆլիս, 12 յունիսի

Ելմիածին պատահած ժամանակը ամենայն հայոց վեհ. Հայրապետ հանգանակելով դրամներէն 605 ռուբլի յանձնեց մեզ ի նպաստ սովորոցն վաս- պուրակների:

Յանուն վասպուրակների յանձնաժողովոյն ազ- գոցու Մշակիչք միջոցաւ մեր ամենախոնարհ շնորհակալութիւն յայտնել կաղաչեմք:

Նախկին առնեսապետի սովորոց նպաստող յան- ձնաժողովոյն

Ս. Տէր-Սարգսեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՂԲԱՆՑԻՆԵՐԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ

«Polit. Corresp.» լրագրի մէջ տպված է արևանական մասնաժողովի գրութեան բնագիրը, որ ուղղված է Սկուտարի մէջ բնակվող Աւստ- րո-Ունգարիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Իտալիայի և Անգլիայի Հիւ- պատոսներին: Այդ գրութիւնը հետեւեալ բո- վանդակութիւնն ունի:

Ներդրական պետութիւնների հաստատա- մատարները արեւելեան հարցը վճռելու հա-

մար հաւաքվեցան Բերլինի մէջ և մի դաշ- նադիր հաստատեցին, որը, ինչպէս եւ օրագրա- կան բոլոր ազգութիւններից, նոյնպէս և ալ- բանցիներից անվտանգ և սուրբ է ճանաչ- ված: Բայց Թիւրքիայի և Չերնօգորիայի կա- ռավարութիւնների մէջ կայացած դաշնա- գիրը Խօտի և Գրուզի շրջանները Գու- սինիայի հետ փոփոխելու վերաբերու- թեամբ, տարաբաղադար այդ դաշնագիրը զեղծվեցաւ, ոտնակոխ անելով ազգայնութեան սկզբունքը, որ եւ օրագրական պետութիւնների հիմունքն է կազմում: Մենք այլանշանքս հաստատ հաւատում ենք, որ մեր ամենա- սուրբ իրաւունքները ոտնակոխ անող, իր մէջ արեւնահեղ սերմեր պարունակող և պիտեան քաղաքակրթութեանը հակառակ այդ դաշ- նագրութիւնը Օսմանեան կառավարութիւնը ակամայ է կապել և այդ պատճառով վէճերի առարկայ չը դարձաւ միջնորդ պետութիւն- ների համար: Նրեի պետութիւնները լաւ ծանօթ չէին Ալբանիայի ազգաբնակչութեան կամքի և հայեացքների հետ, որոնք ձգտել են պահպանել իրանց սեփական երկրի ամ- բողջութիւնը, ազգային բնաւորութիւնը, որը արեւանական ժողովրդի սեփականութիւն է եղել չորս դարերի ընթացքում: Մեր թան- զադին, բայց տարաբաղը հայրենիք Ալբա- նիան, որ պատմութեան մէջ իր պատուաւոր տեղն ունի, չէ կամենում ոչ ծախված և ոչ փոխված լինել և երբեք չի համբերի օտարի իշխանութիւնը, մանաւանդ պաղկանների, որոնցից նա գանազանվում է ծագումով, լե- ջուով, սովորութիւններով և ասանքութիւն- ներով: Մենք կամենում ենք միայն այլանշա- ներ լինել: Մենք ոչինչ չենք պահանջում, բայց մեր հայրենիքի ամբողջութիւնը, իսկ այդ հայրենիքը մեզ համար նոյնքան թան- գազին է, որքան մի քաղաքակրթված ժո- ղովրդի համար իր հայրենիքը: Մենք դի- մում ենք քաղաքակրթված ազգերի ար- դարադատ զգացմունքին, խնդրելով եւեւա- կայել մեզ սպասող վիճակը և չը թողն ապ- իր մեզ հետ անարդար վարվեն: Մեր ազգու- թեան պահպանելը եղել է և կը լինի մեր ամենասուրբ նպատակը: Երբ Խօտի և Գրուզի նահանգները Չերնօգորիային զիջելու տիւր- լուրը ստացվեցաւ, արեւանական բոլոր ցեղերը անհամեմատ միաբնակութեամբ վճռեցին բո- լորը մեռնել, քան թէ իրանց երկիրը Չերնօ- գորիային տալ: Այդ վճռից յետոյ մի շարքա- վայ ընթացքում Ալբանիայի սահմանների մօտ 10000 պատերազմողներ հաւաքվեցան, որպէս զի օտար բազմաթիւ զօրքերին թոյլ չը տան մանել մեր երկիրը: Մենք կրկնում ենք, որ մտադիր ենք Բերլինի դաշնագրի համեմատ վարվել և պաշտպանողական դիրք ունենալ: Ինչպէս մենք չենք կամենում, որ օ- տարները մեր երկիրը մանեն, նոյնպէս էլ մենք օտարի երկիրը չենք մանի: Բայց որովհետեւ այս կառվածելի դրութիւնը երկար չէ կարող տևել, կամ այն պատճառով, որ Չերնօգորիայ մեզ սպառնում է, կամ որ Ալբանիան բաւա- կանացուցիչ Ֆինանսական միջոցներ չունի, մենք պէտք է աշխատենք ամրացնել մեր ազ- րային միութիւնը: Նկարագրելով այս բոլորը, խնդրում ենք մեր երկրում բնակվող պ. պ. Հիւպատոսներին մեր այս գրութիւնը ներ- կայացնել իրանց կառավարութիւններին, որոնք, յոյս ունենք, այս բոլորի վրա ուշադրութիւն կը դարձնեն: Մեր հարցի գրութեան հետ ծանօթանալուց յետոյ, թող պետութիւն- ները թոյլ չը տան թափել այլանշան արեւել և հոգան, որ այլանշաններից չը լսեն այն իրաւունքները, որոնք կատարելապէս անպահովված են ուրիշ ազգութիւնների հա- մար:

ԲԵՐԼԻՆԻ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱ

«Polit. Corresp.» լրագրի Փարիզի թղթակիցը գրում է հետեւեալը:

Բերլինի կոնֆերենցիան կը հաւաքվի ա- ռանց սպասելու, որ Բ. Գուռը պատասխան տայ դեսպանների համաձայն գրութեանը: Կոնֆերենցիան այն օգուտը կը տա, որ թիւրք-յունական սահմանական խնդիրը այս- պէս թէ այնպէս կը վճռի: Փարիզի գերմա- նական դեսպան Բազովից նորերում հրաւի- րեց Ֆրանսիական կառավարութեանը մաս- նակցել կոնֆերենցիային:

Ֆրանսիական կառավարութեան կողմից կոնֆերենցիային կը մասնակցեն Բերլինի դես- պան Կոմս Սեն-Վալիէ և Ֆրանսիական զը- խաւոր շտաբի գնդապետ Պերիէ, իբրև տեխ- նիկ-պատգամաւոր: Թէպէտ կոնֆերենցիայի պրօգրամը սահմանափակված է Յունաստանի սահմանների խնդրով, բայց Փարիզում երկիւղ են կրում, որ որ և է մեծ պետութեան ներկա- յացուցիչ ուրիշ հարցեր էլ կը բարձրացնի: Այս դէպքում յոյս են դնում կոնֆերենցիայի նախագահ իշխան Հոսենյոսէյի ճարպկու- թեան վրա: Ֆրանսիան այժմ աւելի քան թէ երբեք կամենում է պաշտպանել Յունաստա- նի ցանկութիւնները Նանիայի վերաբերու- թեամբ: Քանի որ անգլիական կառավարու- թիւնը հաւանց ֆրանսիայի ունեցած հա- յեացքները այդ գործի վրա, յոյս կայ, որ Գերմանիան և Աւստրո-Ունգարիան չեն ընդի- մադրի: Տեխնիկական մասնագիտովը, որ կու- ղեւորվի որոշած սահմանների զիջը հաստա- տելու համար, իր հետ բաւականաչափ պա- հապան զօրքեր կունենայ մասնագիտողի ան- դամների ապահովութիւնը պաշտպանելու համար: Ասում են, որ պահապան զօրքերը կը գրաւեն սահմանական ամբողջ գիծը:

Աւելորդ դժուարութիւններ չը ծագեցնե- լու համար մեծ պետութիւններից ոչ մէկը իր զօրքերը չի ուղարկի: Իսկապէս սուլթանն էլ և Յունաստանն էլ բաւականաչափ կանո- նաւոր փորձված զօրքեր ունեն: Եթէ Բ. Գուռը համաձայնէր, կարելի էր թիւրքաց պահապան զօրքերին սահմանի հիւսիսային գծի վրա կանգնեցնել, իսկ յունական զօրքե- րին հարաւային սահմանների մօտ: Այդպի- սով տեխնիկական մասնագիտողի անդամները ոչինչ վտանգի չէին երթարկվի: Ֆրանսիական դեսպան Տիսսօյի ասած ձառը, երբ սուլթանը նրան ընդունեց, իր վրա առանձին ուշա- դրութիւն դարձրեց: Այդ ձառի մէջ նշանա-ւոր էր այն մասը, որով դեսպանը ցանկու- թիւն է յայտնել Ֆրանսիայի և Թիւրքիայի բարեկամութիւնը ամրացնելու մասին: Այդ խօսքերը հանդուստցիւն այն քաղաքագէտնե- րին, որոնք երկիւղ էին կրում Թիւրքիայի վի- ձակի համար: Իսկապէս Թիւրքիայի զօրքերը մեզ դրութեան մէջ չեն: Արեւելեան-Ռումե- լիայի շարժումը վտանգաւոր է դառնում: Բաղդադի մօտ արաբական ցեղերը ապստամբ- վում են, անտեսական և վարչական դրու- թիւնը Նիւսադէմի, Սիրիայի և Հայաստանի մէջ հետզհետէ վաղձարանում է: Ժամա- նակ է նշանակել եւրօպական մի մասնագիտով և յանձնել նրան թիւրքաց ողորմելի վարչու- թեան կարգի բերելը:

ԹԻՒՐԿ-ՅՈՒՆԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

«ГОЛОСЪ» լրագրի մէջ տպված է հետե-ւեալ առաջնորդը յօդուածը:

Յունիսի 4-ին Բերլինում բացվելու է լրա- ցուցիչ կոնֆերենցիա, որին վիճակված է վեր- ջնական վճիռ տալ թիւրք-յունական սահ- մանական վէճին: Բերլինի մեր թղթակիցը բաւական հետաքրքիր և նշանաւոր տեղեկու- թիւններ է հաղորդում կոնֆերենցիայի պա- րապմունքների կարգի մասին:

Իր անդամների հաւատարմութիւնները քննելուց յետոյ, կոնֆերենցիան ամենից առաջ կը վճռի, թէ ինչ մոզով պէտք է հասկանալ Բերլինի կոնգրէսի 13-դ պրոտո- կոլը և Բերլինի դաշնագրի 24-դ յօդուածը:

Այսուհետեւ կը ընկնէ այն յանձնարարութիւններէն, որոնք կը տրուին տնտեսական մասնագիտողին: Վերջապէս կը քննվի այդ մասնագիտողին անդամներէն ապահովութեան հարցը:

Մեր թղթակիցը այս վերջին հարցը ընդ-նկնի հարցերէն, իրաւացի կերպով, ամենա-դժուարն է համարում: Հարցը նրանումն է, արդեօք հարկաւոր է մասնագիտողին ապահով-վութեան համար պահպանել օտար զօրքեր ուղարկել, թէ Բ. Դոնից կարելի կը լինի ըս-տանալ յուսով և բաւականաչափ պահպան զօրքեր, որոնց պաշտպանութեան տակ մաս-նագիտողը կարողանար աշխատել, առանց ար-գելքներէ հանդիպելու և առանց վախճա-լու տեղական մահաբերականներէ յարձակունք-ներէն: Եթէ մասնագիտողին ապահովութեան համար անհրաժեշտ կը լինի եւրոպական զօրքեր ուղարկել, այն ժամանակ այդ զօրքե-րի ազդեցութեան հարցը կը բարձրանայ, իսկ այդ հարցը այնքան դժուար է, նրա մասին պետութիւններէ մէջ այնպիսի անհամաձայ-նութիւն է տիրում, որ այդ դէպքում չեն իրազօրծվի ոչ տնտեսական մասնագիտողի և ոչ կոնֆերենցիայի ղեկավարութիւնները: Այդ հետեանքը չափազանց հաւանական է և այդ պատճառով Կ. Պոլսի մէջ եղած և Բ. Դոնի վրա ազդեցութիւն ունեցող օ-տար պետութիւններէ ղեկավարները պէտք է պնդեն, որ սուլթանը տնտեսկա-կան մասնագիտողին պաշտպանութեան համար իր զօրքերն ուղարկել:

Եթէ ենթադրենք, որ սկզբնական դժուար-ութիւնները այսպէս կանխատեսան և որ կոնֆերենցիայի առանց արգելքներէ պատա-հելու կը կատարէ իր վրա դրած պարտա-կանութիւնները, այնուամենայնիւ դրանից յետոյ էլ թիւրք-յուսական սահմանական հարցը վերջնականապէս վճռված չի լինի: Կոն-ֆերենցիայի վճիռները կը ստեղծեն իրաւա-բանական հիմունքներ Յունաստանի հողային պահանջներէ համար: Յունական կառավա-րութիւնը թէպէտ կոնֆերենցիայի մէջ ձայ-նի իրաւունք չունի, այնուամենայնիւ բաւա-կան կը մնայ կոնֆերենցիայի վճիռը, որով-հետեւ դրանից կերպով, թէ Ներսիսի մինչեւ ո՞ր աստիճան իրաւացի և իրազօրծելի է հա-մարում Յունաստանի պահանջները: Նոյնը չէ կարելի ասել Բ. Դոնի մասին, որ անպատճառ կը բողոքի, հիմնովի մահաբերականներ և այլաբաններէ ֆանատիկոսութեան և իր ան-զօրութեան վրա զսպել ֆանատիկոսներէ ըն-դիմադրութիւնը: Այս դէպքում միայն մի ելք կը մնայ, այն է յունական զօրքերով դրա-ւել այն երկրները, որոնց Բերլինի կոնֆե-րենցիան Յունաստանին կը տայ:

Ո՞վ կարող է գուշակել, որ այսպիսի գրա-ւումն նոր և բաւական ծանր դժուարու-թիւններէ պատճառ չի դառնայ: Յունական զօրքերին անպատճառ կը զրկուին տեղացի մահաբերականները և այլ երկու կողմերի կու-լի ժամանակ այնպիսի անցքեր կարող են պատահել, որ բացարձակ պատերազմ կը բացվի Յունաստանի և Թիւրքիայի մէջ: Այդ-պիսի պատերազմի հետեանքները դժուար է նախատեսել: Գործի մէջ երբեք չեղած յու-նական զօրքերը կը պատահեն ռուսներէն յաղթված, բայց պատերազմի մէջ դարձնված թիւրքաց զօրքերին, որոնք լաւ յիշում են վերջին ռուս-թիւրքական պատերազմը: Եթէ այդ պատերազմը յունաց զօրքերի հա-մար անաջող լինի, Ներսիսի դարձեալ ստիպ-ված կը լինի գործի մէջ խառնվել և արեւ-ելեան հարցը նոր և անպատշաճ կերպարանք կը ստանայ: Բերլինում հաւաքվող զիլլաժմա-տները պէտք է ի նկատի ունենան այդ կարե-ւորութիւնները և այնպիսի վճիռ տան հար-ցին, որ զօրքը չերկարի: Այս նպատակին հասնելը հեշտ չէ, բայց կարելի է: Բոլոր բարեմիտ եւրոպացիները ցանկանում են, որ կոնֆերենցիան աւելի լաւ հետեանքներ

ունենայ, քան թէ ունեցել է Բերլինի կոն-գրէսը:

Նոյն լրագրի հետեւալ համարներէն մէկի մէջ տպված է:

Յունիսի 4-ին բացվեցաւ կոնֆերենցիայի նիստը: Իշխան Հոսենյոսէ մի ծառայող ուղղու-նեց անդամներին և այնուհետեւ ստուգվեցան հաւատարմութիւնները: Իշխան Հոսենյոսէ միաձայն ընտրվեցաւ կոնֆերենցիայի նախա-գահ:

Նոյն իսկ առաջին նիստի ժամանակ կոն-ֆերենցիան անհրաժեշտ համարեց իր խոր-հուրդները գաղտնի պահել: Թէպէտ ընդ-հանուր հետաքրքրութիւն գարթեցող այդ գործի գաղտնի պահելը շատ դժուար և մինչև անգամ անկարելի է, այնու-ամենայնիւ մենք դժուարանում ենք հաս-կանալ այդ գաղտնապահութեան անհրաժե-տութիւնը, մանաւանդ այն դէպքում, երբ կոնֆերենցիայի աշխատանքները առաջուց որոշված և ամենքին յայտնի են: Բերլինի կոնգրէսի ժամանակ բոլորովին ուրիշ էր: Այն ժամանակ կոնգրէսի անդամներէն շատերը ցանկանում էին, որ իրանց ցանկութիւնները և ղեկավարութիւնները ծածկված լինէին մամուլից և հասարակութիւնից, որ հասարա-կութիւնը միայն կայացած վճիռները իմա-նայ: Բաղդադապէս այն ժամանակվանից պետութիւններէ փոխադարձ յարաբերու-թիւն-ները փոխվել են դէպի լաւ:

Հիմնովեց արդէն հեռագրիւր հաղորդում է, թէ պետութիւններէ ներկայացուցիչներէ համաձայնութիւն է տիրում, որ «կարող է ապահովել կոնֆերենցիայի աշխատանքներէ արագ ընթացքը»: Նոյն իսկ կոնֆերենցիայի նշանակելը ապացուցանում է, որ հետաքր-քրված բոլոր պետութիւնները համոզվու-նեն, թէ անհրաժեշտ է Բերլինի դաշնագրով ստեղծած գործերի անորոշ և անցողական դրութեանը վերջ դնել:

Լոնդոնից ստացված մի հեռագրի հաղոր-դեց Բ. Դոնի յայտարարութիւնը, թէ կոնֆե-րենցիայի վճիռները նրա համար պարտաւորե-ցուցիչ չեն կարող լինել, որովհետեւ հետա-քրքրված կողմերը հեռացրած են կոնֆերեն-ցիայի մասնակցութիւնից: Մի ուրիշ հեռա-գրի հերքեց առաջինը և Բ. Դոնի յայտար-արութիւնը այնպէս մեկնեց, որ թիւրքաց կա-ռավարութիւնը պատրաստ է ենթարկվել կոն-ֆերենցիայի վճիռներին, բայց նա յոյս ունի, որ պետութիւնները ի նկատի կառնեն հո-ղային զիջումներէ պատճառով առաջացած դժուարութիւնները: Սրանից երևում է, որ թիւրքաց կառավարութիւնը հաւատարիմ է մնում իր հին ուղղութեանը և առաջուց խօսում է դժուարութիւնների մասին: Ան-պատճառ հարկաւոր է, որ Բերլինի կոնֆե-րենցիայի անդամները ուշադրութիւն դար-ձնեն այն հարցերի վրա, որոնք կարող են առաջացնել Բ. Դոնի անկարելի դժուարու-թիւնները:

ՆԱԽԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Վան, մայիսի 20/7 յունիսի

Նիստարական ասորիներու կաթողիկոսը (Մառ-մոն) որ կը բնակի Տիւրքիոյ և Տուրքուսի լեռները և իր իշխանութեան տակ քան հազարէն աւելի զինեալ նեւտորականներ ունի, մայիս 23-ին (յու-նիս 4) Վան եկաւ և այժմ կը բնակի Արշեստան հայոց թաղի եկեղեցոյ խորհրդարանը:

Սա երկրասարդ է և իր կողմէն վրայ երկու չափանիւններ կախում են, որոնք օսմանեան տե-րութիւն տուած է: Վանի թուրք կառավարու-թեան հետ, որոյ իշխանութեան տակ կը գտնուի, արքեպիսկոպոսներու հաշիւներ ունենալով, դանձը կարգադրել եկած է: Եւրո շատ կոչու և տգէտ մի մարդ է. քալել անգամ չը դիտեր կանոնաւորա-պէս, որոնքն գուպալ միայն հազած է և քալած ժամանակ այնպէս դետին կը դարձն ոտքերը, որ կարծես թէ կողմէ շարժել պտտած տեղը: Նեւ-տորականներ խորամանկ մարդեր են, իրենց քաղա-

քաղաքները (զիլլաժմա) խաբէութիւն է. թէ ռուսաց կառավարութեան և թէ անգլիակա-նին պատգամաւորներ խրկած են թէ մենք ձեզ անհուկ ենք: Այս ժողովուրդը ամենէն աւելի հայոց ազգին հետ բարեկամութիւն ունի և այնպէս համոզուած է թէ Ներսիս, և մասնաւորապէս Ռուսիան, կը պաշտպանեն հայերը:

Քանի որ է որ առաւ անձրեւներ եկան, վա-ղուց է որ ոչ մէկ տարի այսչափ անձրեւային և պտղաբեր չէր եղած: Թէ և դարունին գիւղացի-ներ գրկել ընտել ցորեն չեն ցանած, բայց աշու-նին ցանուածն զարնցանին տեղին ալ պիտի բռնէ: Այլ սակայն այս առաւելութեան նշաններ չեն կըր-ցած ցորենի գինը շատ պակսեցնել, զի մեջտեղ ընտել ցորեն չը կայ այժմ և մինչև հունիս ատեն որ ամիս ու կէս կը տեւէ, ինչով պիտի ապրի խեղճ ժողովուրդը... Հանապարհներու դիւրութիւններ ալ չը կան որ ուրիշ հեռաւոր քաղաքներէ ցորեն փո-խադրուի Վան: Թուրք կառավարութիւնն ալ այդ փոխադրութիւններու առջև դժուարութիւններ և արգելքներ կը հանէ: Նաև, քիւրդ և թուրք աւա-ղակաց խումբեր կը յարձակին հայոց արտերուն վրա և աւարացները (չը հասունցած ցորենի ծի-ւեր) կը կերցունեն իրենց անասուններուն: Ասկէ զատ, ճանապարհորդներ կը կողոպտեն և կը սպա-նեն: Երկու շաբաթ առաջ Վանէն Կ. Պոլսի դա-նուց թուրքական փոստը կողոպտեր էին: Հայեր բարձրանորս պատրիարքին հեռագրեցին այստեղի սոսկալի վիճակը և չորս օր առաջ պատրիարքէն հեռագիր եկաւ թիւրքման հայրիկին թէ պատրիարքն անձամբ գնացել է սուլթանի մօտ և յայտնել է Վանի սարսափելի դրութիւնը: Սուլթանը խոստա-ցեր է քրիստոնէաներէ և իսլամներէ բաղկացած մի մասնագիտող անմիջապէս ղրկել Վան, որպէս զի այնտեղ ապահովութիւն և բարեկարգութիւն մտցունեն, սուլթանի թիկնապահներէն (ադիւ-ղանտ) երեք անձ պիտի ընկերանան այդ մասնա-գիտողին: Բայց մինչ չենք կարող յոյս մը դնել այս մասնագիտողին վրա, զի թէ Բ. Դոնը կամե-նար ապահովութիւն և բարեկարգութիւն հաստատել այստեղ, նոյն բանը կարող էր անել արդէն եկած կայսերական կոմիսէրներու, Եւրասի-փայայի և Աղաբէկեան Սարգիս էֆենդիի միջոցով, որոնց ղըր-կած տեղեկագիրները և ծրագիրները (պրօէկտ) արդէն միշտ անպատասխան թողնած է Բ. Դոնը:

Կը միևնույն ժամանակ զոնէ մասնակցող որ երբ այս-պիսի քանի մը մասնագիտողներ գան և ոչինչ չը գործեն, ալ ժամանակ եկած կը լինի եւրոպական միջազգային մասնագիտող մը այստեղ գալու և մինչև որ այդպէս չը լինի, երբեք յոյս չը կայ որ ապահովութիւն և բարեկարգութիւն մտնեն Հա-յաստանի մէջ:

«Մայիս 25 (յունիս 6) կիրակի օր, ազգային սահմանադրութեան տարեդարձի հանդէսը կա-տարվեցաւ սուրբ Գրիգորի վանքին դաշտավայրը, ծառաւետ և շատ սիրուն տեղ մը, որ Այգեանա-նէն մէջ ու կէս ժամի չափ հեռու է: Նահանգա-պետ փաշան և Սամիհ փաշան ջանացած էին ար-գելու այս հանդէսը, բայց ժողովուրդը մտիկ չըրաւ և ցոյց տուաւ թէ ոչ հանելի սովը, ոչ թուրք կա-ռավարութեան սպառնալիքները և ոչ ընտելեան դժուարութիւնները (այն օրը սաստիկ անձրեւ ե-կաւ) կըրցած էին հանդէսները Վանի հայոց ազգա-յին եռանդը:

Հանդիսականներէն շատեր անձրեւոցներով (օմ-բէլա) եկած էին այդ մէջ ու կէս ժամուան տեղը, որ ոտքով երկու ժամէն կարելի է երթալ, ատե-նաբանութիւններ լսելու և հանդէսը շքեղացնելու համար: Ատենաբաններուն մէջ էր նաև ռուսա-կան փոխ-հիւպատոս Սիմ. Կամարական բէկ, որ հայրէն ընդունով յայտնեց իւր ուրախակցութիւնը և գովեց հայոց աշխատասիրութիւնը: Նահանգա-պետ փաշային օգնական (մուավին) Վեմ. Աղաբէ-էֆենդին ալ մի ճառ կարդաց, որով հայոց պար-կեշտութիւնը գովեց և ըսաւ թէ այս տարուան հանդէսը նախորդ տարուան հանդէսէն գերազանց է, զի այս տարի սահմանադրութիւնը գործադրուած է, մինչդեռ անցած տարի նորա անունը միայն կար Վանի մէջ: Միւս ատենախօսներն էին Հայ-կազեան վարժարանէն և Վարազի վանուց զիշերօ-թիկ վարժարանէն մէկ մէկ աշակերտ, Հայրենա-սէր ընկերութեան նախագահ պ. Մ. Թէրլէմէ-ղեան, Արարատեան վարժապետանոցի սաներէն պ. Գ. Նաթանեան, և պ. Գ. Տիգրան Ամբճա-նեան, Մ. Նաթանեան և Մ. Փորթուգալեան: Ներկայ էր նաև Սիմ. Աղաբէկեան Սարգիս է-ֆենդին, թէ առաւօտ հանդիսավայրը դնացած և թէ երկույն Այգեանաւ վերադարձած ժամանակ ժողովրդին առաջնէն կերթային նուազածներ, որոնց կը յաջորդէին երգեցիկ պատանեակներ: Պարզուած էին նաև չորս դրոշակներ, որոնց վը-րայ դրուած էր Վեցցէ վեհափառ սուլթան Հա-միդ խան, Վեցցէ ազգային սահմանադրութիւն, և

Վեցցէ Արարատեան ընկերութիւն, Վեցցէ Հայ-րենասէր ընկերութիւն: Հայկերով չը տրուեցաւ զի տեսնուեցաւ որ այս սովի ժամանակ շատ դը-ժար պիտի լինէր այդ: Տոմարներէ զինք մէկ ար-ձաթ մէճիդէն (մէկ ու կէս րօպի) իջեցուցին ու թ զուրուչի (քառասուն կոպէկ), Հանդիսին նախագահն էր թիւման հայրիկ, բայց նոյն օրը վարազէն եկած ժամանակ կէս ճանապահին վրա շատ սաստիկ անձրեւի բռնուեր և չէր կրցեր յա-ռաջանալ: Այս հանդէսը կատարեց Հայրենասէր սանուց ընկերութիւնը, որուն օգնեց Երուսաղեմի Տէր-Գալուստ հայրը: Բացի այս քահանայէն, ոչ մի եկեղեցական չէր եկած տարեդարձի հանդիսին:

Թէ ճանապարհին վրայ և թէ հանդիսավայրին մէջ ժողովուրդը երբեմն երբեմն հրացան կարձա-կէր: Այգեանաւ վերադարձած ժամանակ, ժողո-վուրդը զնաց թիւման հայրիկի տան առջև և կեցցէներ պօռալով համակրութեան ցոյցեր ըրաւ: Այն տեղէն զնաց անգլիական և ռուսական փոխ-հիւպատոսարաններու առջև և երգեր երգելով, կեցցէներ պօռալով Անգլիոյ վեհափառ թաղուհոյն, նորընտիր պապանեկութեան և պ. Կէյսուփի հա-մար, նոյնպէս և ռուսաց մեծազօր Ալէքսանդր Կայսեր, Լորիս-Միկելովի և Կամարական բէկի համար: Այս միջոցին հրացաններով կը դատար-կէին ի պատիւ այդ անուններուն:

Վեմ. Կամարական բէկ արդէն մի անգամ ճաչ տուած էր 4000-ի մօտ սովածներու, դարձեալ նոյնչափ սովածներու ճաչ պիտի տայ առաջիկայ հինգշաբթի, Համբարձման տօնի օրը: Այն միջ հայ մը չը կայ որ չօրհնէ Կամարականի անունը, նա ոչ թէ կը սիրուի, ալ կը պաշտուի ժողովրդէն:

Հրամա

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Голосъ» լրագրին գրում են Լօնդոնից: Այս-տեղ շատ դժգոհ են թիւրքաց կառավարութիւնից Հայաստանի վերաբերութեամբ: Այդ թշուառ նա-հանգը երէկ խօսակցութեան առարկայ էր լորդե-րի ժողովի մէջ: Բոլոր կուսակցութիւնները հա-մաձայն են, որ Հայաստանի դրութիւնը այնքան վատ է, որ ոչինչ յոյս չը կայ նրան բարելոյնու-մինչև որ կառավարութեան ձեռք չը փոխվի այդ երկրի մէջ: Բ. Դոնը խոստացաւ մանաժողով նշանակել, բայց ամենքը գիտեն թէ ինչ են նշա-նակում թիւրքաց խոստումները:

«Temps» լրագրին Բերլինից հեռագրում են որ Բայխոստագի մի հանգուցեալ պատգամաւոր տեղ մի ուրիշ պատգամաւոր ընտրելու ժամանակ, Բեր-լինի փողոցների մէջ անայտ մարդիկների ձեռքով կախվեցան սօցիալիստական պրօկլամացիաներ, ո-րոնց մէջ ասված էր, թէ Գերմանիան ոչինչ չունի սպասելու հեռագրեան և յաջորդական վերանորո-գութիւններից, այլ հարկաւոր է մի յեղափոխու-թիւն գործել, ոչնչացնել եղած քաղաքական կար-գերը և յայտնել հանրապետութիւն:

—Լօնդոնի լորդերի պալատում կարնարվոն հա-յոց ինչորդ պաշտպանեց և ասեց որ այժմ ան-հրաժեշտ է Հայաստանում վերանորոգութիւններ մտցնել: Հարկաւոր է, ասեց Կարնարվոն, նշանա-կել մի քրիստոնէալ նահանգապետ Հայաստանում: Դոնը Արգայլ մեղադրեց Կարնարվոն, որ նրա միջնորդութիւնը այն վնասը բերեց, որ երկպառա-կութիւն մտցրեց եւրոպական պետութիւնների մի-մեանց մէջ:

«Times» լրագրիւր լորդ Կարնարվոնի կողմն է բռնում հայոց ինչորդ վերաբերութեամբ և ասում է թէ հարկաւոր է շուտով արժանապատիւ բեֆօրմներ մտցնել Հայաստանում: Անգլիական լրագրերը բա-նալուում է Սալիսբուրիի դէմ, ապացուցանելով որ Հայաստանի թշուառութիւնը հետեանք է վատ կառավարութեան և որ կարելի է հեռացնել այդ վատ հետեանքները եւրոպական պետութիւն-ների համաձայն պահանջներով: Բ. Դոնից, որ խոս-տացած բեֆօրմները կատարվեն, դատաւարա-կան և կառավարական մասում, վերանորոգու-թիւնները մտցնվեն հարկահանութեան մէջ և հաս-տատուի ժանդարմների գոնդը:

—Լօնդոնի Միտի թաղը առաջարկեց յունական թագաւորին Լօնդոնի պատաւաւոր քաղաքացու տիտղոսը:

—Լանդօնից լրագրիւրներն հեռագրում են, յու-նիսի 5-ին (17) հետեանքը. «Ապրիլի 27-ից ու-ղարկված հեռագրի մէջ պ. Լայպրիցը յայտնում է, որ սուլթանը զրգոված է Անգլիայի դէմ: Լա-յպրիցը խօսքերին նայելով, հիւպատոսների տուած տեղեկութիւնները ապացուցանում են, որ թիւր-քաց կայսրութիւնը դեռ ևս այդպիսի քաղաքական և կրթական դրութեան մէջ չէ գտնվել: Լա-յպրիցը առաջարկութիւններն սուլթանը միշտ խոստումներով էր պատասխանում, և երբեք չէր կատարում: Սուլթանի և նրա խորհրդակց-ների քաղաքականութիւնը, ինչպէս ասում է Լա-յպրիցը, կայանում է նրա մէջ, որ գործեն առանց Եւրոպայի և նրա հակառակ:

Դոնադիր — հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՆԻ

